

— Եկուր ուրեմն գիրկս . բանա-
ստեղծ մը և զինուոր մը արժանի են կայ-
սեր մը ողջագուրանացը : Երթաք բա-
րով , տղաքս , գնացէք մտէք յաշխարհ .
երանի թէ արհեստները ձեզի այնպի-
սի փառք մը տան որ կայսերական գա-
հուն տուածէն պակաս վշտալի ըլլայ :
Երթաք բարով , և ատեն ատեն մըտ-
քերնիդ բերէք եղբայր Արսէնը :

— Ոչ երբէք Միքայէլ Սէրվանդէս
պիտի մոռնայ այս օրս , ըսաւ բանա-
ստեղծը , ծնկան վրայ գալով կայսեր
առջև . Ստեփան Մուրիլեոյ ալ իրեն հե-
տևեցաւ : Կարոյոս Հինգերորդ ձեռուը-
ները տարածեց գլխընուն վրայ և զի-
րենք օրհնեց :

Յետոյ արցունքը սրբելով մտաւ խը-
ցիկը :

Կը շարունակուի :

Ա Յ Ղ Ա Ն Ք

Աֆղանք՝ որոնց ծագումը յետ ուշի
ուշով քննելու զիտնականք՝ դեռ ան-
ստոյգ կը համարին՝ զլիսաւոր երեք
ճիւղ բաժնուած են , ու բազմաթիւ ցե-
ղեր : Պերսոտուրանի ցեղը երկրագործ է
և կը բնակի Հինտուքուհի լեռան ձո-
րերուն և բլուրներուն մէջ . և որովհետև
իրեն անման և բազմանալուն համեմատ
չկրնար իր երկիրն ալ ընդարձակել՝ այն
պատճառաւ գժտութիւնները և արիւ-
նահեղ պատերազմները անվերջանալի
են մէջէն . նոյն վիճակն ունի նաև Եռն-
սուֆզաի և կամ Եռսուֆի որդի ցե-
ղը իր ռամկապետական վարչութեանը
պատճառաւ . ասոնք Պերտուրանինե-
րուն մերձաւոր են՝ և բնակութիւննին
300 տարուան ստացուածք է : Քաղաքք,
Օդմանքիալք և Գուրքոյակիք ալ առ-
ջիններուն պէս կուուոյ հետ են , և ա-
նոնց սահմանակից : Աֆղաններուն մէ-
ջէն միայն այս ետքինները իրենց գե-
րեացը վրայ բացարձակ տիրութիւն և

ուզած անգթութիւննին կը բանեցը-
նեն և ինչուան անոնց կեանքն անգամ՝
ձեռուընին առած են : Գերեաց գործա-
ծութիւնը , թէպէտև սովորական է Աֆ-
ղանաց մէջ՝ բայց ասոնցը աւելի ծա-
ռայք կրնան ըսուիլ քան թէ գերիք .
երկրագործութեան կը զբաղին , կերած-
նին և հագածնին շատ անգամ իրենց
տէրերուն պէս է , և ինչուան կալուածոց
ալ տէր կրնան ըլլալ : Քուհի-Սուլէյ-
ման լեռան բնակիչները Շիրուսի և Վի-
զիրի կ'ըսուին . յափշտակութե կ'ապ-
րին և իրենց երկրէն անցած կարաւան-
ներուն վրայ հարկ կը դնեն : Ասոնց ա-
րևմտեան կողմը կիլիսիան Տուրանիները ,
որոնց անունը Անմէտ Շահէկ ելած է .
վասն զի Ահմէտ-Շահն որ էր այս ցե-
ղէն՝ ըսուած է Շահի տուրի տուրան .
այսինքն քաղաւոր աշխարհաց աշխար-
հի : Ասոնց ալ հիւսիսային կողմը կ'իլ-
նան Կիլիսիները , որոնք անուանի եղած
են վերջի դարուս մէջ իրենց Պարսից
դէմ կանգնած յաղթութեանց պատ-
ճառաւ : Հազարէն ցեղն ալ անուն հա-
նած է երգոց , բանաստեղծութեան և
որսորդութեան վրայ չափազանց սէր
ձգելուն համար :

Հնդկաստանցիք Աֆղանաց Բիդաև
կամ Բադաև անունը կու տան որ Բուշ-
դաևէ բառին ազաւաղեալն է , և Աֆղա-
նաց բուն անունը : Բայց ինչպէս շատ
տգէտ և անգրական ազգեր տաճկու-
թիւնը ընդունելէն ետքը՝ ազգութիւն-
նին ալ կորուսեր են՝ նոյնը եղած է Աֆ-
ղաններուն ալ . կուրանի զաղափարաց
և հրէական ցնորարանութեանց վրայ
ձուլուած , իրենք զիրենք յԱսորեստան
գերեալ Հրէիցմէ սերած կը համարին :
Լեզունին Բուշդուզ կ'ըսուի և երեք բար-
բառ ունի . Տուրանի , Պերտուրանի և
Բադաևի . այս բարբառները ոչ միայն
հնչմամբ կը զանազանին իրարմէ , այլ
և բառերով : Բուշդու լեզուն խիստ՝ բայց
ուժով , արևելեան լեզուաց ընտանի ա-
կանջներու ախորժական է , թէպէտև
ծագումն անստոյգ՝ բայց կան որ քաղ-
ղէտրենի շատ նմանութիւն ունի կ'ը-
սեն . ունի նաև սանպրիդէն առած բա-



Ա. ֆղան գորակսն .

ուեր ալ, ինչպէս հայր, մայր և քոյր,
 և այլն . իսկ կրօնական, ուսումնա-
 կան և վարչութեան բաւաճքները ա-
 բարբրէն ու պարսկերէն են . ունի նաև
 վերոյիշեալ լեզուաց բառերէն զատ հայ
 երէն, վրացերէն և երբայեցերէն բառեր
 ալ : Գրականութիւննին նոր է և աղ-
 քատ . և զբաւոր երկասիրութեանց մէ-
 ջէն ընտրելագոյնները պարսկերենէ
 թարգմանեալ բանաստեղծութիւններ
 են : Իմաստնոց և զիանոց դասէն են

կրօնից գլուխները և պաշտօնակատար-
 ները . իսկ իմաստնոց խրախոյս տուող
 և զանոնք քաջալերողներն են իշխան-
 ները : Եւրոպիոյ լիկէսններուն նման
 դպրոցներ ալ ունին :

Ըստ նկարագրութեան այս կողմե-
 ռուս ճանապարհորդաց Ա. ֆղանք պնդա-
 կազմ են, նիհար և ջղային, սևամորուս
 և սևահեր, արծուունդն, երկայնաձև դէմ-
 քով և գծերը կանոնաւոր . արևմտեան
 ները հսկայ, և քան զարևելեանները



Տուրանի տոհմէն զիւնուոր .

աւելի ուժեղ և անոնցմէ աւելի նուազ սև են . իսկ կանայք գեղեցիկ և ախորժատեսիլ :

Կ'իմացուի որ արևմուտքի Աֆղաններուն վրայ պարսկական քաղաքակրթութիւնը ազդած է . իսկ արևելակողմը բնակածներուն վրայ հնդկայինը . փոփոխակի առած են իրենց մերձակայից բարբը և սովորոյթը՝ իսկ միջնաշխարհին մէջ բնակողները և ոչ գիծ մը չեն :

Ղաճ են իրենց հին սովորոյթներէն : Ուրիշ տախարնակ ժողովրդոց պէս՝ Աֆղանք ալ երկու մաս կը բաժնուին վրանաբնակք և նստականք : Կրօնասիրութենէ աւելի կրօնամոլութիւն ունին , և նախապաշարմունքներով զրուեալ է մտքերնին : Բազմակնութիւնը ոչ է արգելեալ՝ բայց անոր կիրառութիւնը հարուստները միայն կարող են ընել : Արք կը գնեն ուզած կնիկնին և

յետոյ ուզած ատեննին ազատ են ար-
ձրկելու զանոնք անպատճառ . իսկ կինը
չկրնար իր ընկերը թողուլ առանց իր
պատճառները դատաւորին առջևն հա-
նելու : Բայց այսու ամենայնիւ չկայ եր-
կիր մը ուր տաճկութիւնը տիրած ըլ-
լայ , և հոն տաճիկ կանայք աֆղանու-
հեաց պէս ազատ ըլլան : Պատուաւոր
կանանց դուրս տեղուանք երևիլը արգի-
լեալ է . բայց զուարճութեանց ամեն տե-
սակն ալ թոյլ տրուած է իրենց և ամեն
տեսակ ճոխութիւն . աղքատ կանայք
տնական գործոց կը պարապին , իսկ
բարբարոս ցեղերունը տնէն դուրս գոր-
ծոց : Ազնուական կանայք առ հասարակ
ամենքն ալ զիտեն կարգալ և կրթեալ
են . իսկ գրել գիտնալը համեստ կնկան
մը պարկեշտութեան նախատիւք կը բե-
րէ : Մարց իշխանութիւնը մեծ է ընտա-
նեաց ներքին բարեկարգութեանը վը-
րայ :

Բոլոր ճանապարհորդաց աչքին զար-
կած է Աֆղաններուն ասպնջական ու-
գին և անոնց պարզութիւնը իրենց կե-
նաց , բարուց և խօսակցութեան մէջ .
գոռոզ , առատածեռն և աննենգ , բայց
բիրտ և ցասկոտ , և այնպէս անժոյժ
նախատանաց՝ որ ատելութեան ոգին
ժառանգութեան պէս կ'աւանդեն իրենց
որդուոցը : Չրուցատրելն իրենց մեծ զը-
ւարճութիւն է , պատմութիւններէ և
երգերէ ալ մեծ ախորժ կը զգան . ամեն-
քըն ալ բայց աւելի արևմտակողմիննե-
րը որսորդութե կը զբաղին , և որսի հա-
մար ալ բորենի կը գործածեն . իսկ
այս բորենիները որսալու , կերպերնին
չատ յանդուգն է : Որսորդք ալ ձեռուը-
նին շարժուն հանգոյցով չուան կ'առ-
նուն , ձախով ալ թաղիքէ մեկնոց մը՝
և այսպէս զինեալ բորենւոյն որջը կը
մտնեն . գազանը որսորդին մօտենա-
լէն սարսափած՝ որջին խորերը կը քա-
չուի . բայց իրեն փայլուն և լոյս շողացը-
նող աչքերը ան մթութեան մէջ զին-
քը կը մատնեն . որսորդը , կը սկսի ծըն-
կան վրայ առաջ երթալ և կենդանւոյն
մօտենալ . երբ բոլորովին կը մօտենայ ,
երագութեամբ մը կենդանւոյն գլխոյն

վրայ կը ձգէ իր ձախ ձեռքին վրայի
մեկնոցը . իսկ բորենին զգեստին ծալ-
քերուն մէջ շփոթած ծնկան վրայ կ'իյ-
նայ և որսորդը խածնելու տեղ , կը սկսի
զգեստը խածնել . այն ատեն որսորդը
կենդանւոյն առջևի ոտքերը իր աջ ձեռ-
քի շարժուն հանգոյցով չուանին մէջ կը
սխմէ և ոտուընները վզին կապելէն ետ-
քը կ'առնէ կը տանի : — Աֆղանք ոչ եր-
բէք թուշունները թուշու ատեն կը զար-
նեն , այլ անոնց թառած ու գետին ի-
ջած ատեն : Օրինակի համար , երեք
կամ չորս ձիաւոր կաքաւի մը ետևէն
կ'իյնան , երբ հաւը յոգնած կանկ կ'առ-
նէ՝ այն ատեն որսորդներէն մէկը միայն
առջև կ'անցնի , իսկ մէկալնոնք առաջի-
նին կը հետևին , մինչև որ հաւը ոգե-
սպառ իյնայ մնայ :

Արևմտաբնակ Աֆղաններուն մեծ
զուարճութիւնն է աղդէմ կամ կաւնկոռ
ըսուած ազգային պարը : Քսանի չափ
արք և կանայք խառն կլորածև կը շա-
րուին ամսուը տանց ու վրաններու առ-
ջև , իսկ ձմեռը մեծ կրակի մը բոլոր-
տիքը : Պարաւորները ամեն ձև և ամեն
կերպարանք կ'առնուն , կ'աղաղակեն ,
ծափ ծափի կը զարնեն ու մատուընե-
րուն յօղուածները կը հնչեցնեն : Խա-
ղերնէն շատը տղայական են և իրենց
երկայն մօրուքին , ծանր և հանդարտ
գնացքին անհամաձայն : Եւրոպացուց
պիլ խաղը իրենք ալ կը խաղան . իսկ
հետևեալը՝ թէպէտև դժուարին՝ բայց
հասարակ եղած է մէջերնին . երկու հռ-
գի , երկուքն ալ մէկ ձեռքով իրենց մէկ
ոտքը վեր վերուցած և մէկ ոտքի վրայ
հանգչեցուցած բովանդակ մարմնոյն
ժանրութիւնը՝ իրարու վրայ կը յարձը-
կին և զիրար պառկեցնելու կը ջանան .
խաղին ամբողջութիւնը դեռ ուրիշ շատ
պայմաններ և կնճիռներ ունի : Կռիւն
ալ խաղերու կարգը անցած է . իսկ
մարմնոյ կրթմանաց մեծ վարժութիւն
ունին : Աքաղաղներու , լորերու , շնե-
րու , խոյերու և ուղտերու կռիւներն ալ
իրենց մեծամեծ զուարճութեանց և զար-
մանաց նիւթեր են :

Աֆղանաց զգեստուց տարազը տե-

սակ տեսակ է . բայց արեւմտաբնակացը զուտ ազգային կրնայ ըսուիլ : Արանցը սևագոյն բամբակի լաթէ լայն վարտիք մը և լայն թևերով բաճկոնակ մը մինչև ծնկուրները , կօշիկ մը և մէկ նեղ գլխարկ մը՝ որուն եզերքը մթնագոյն մետաքսէ նեղ երիզ մը պատած է . գըլխարկին վրայ ալ ոսկեղիպակ գդակ մը . շատ անգամ ալ ոչխարի սեկէ շինած օձիքով մեկնոց մը կը ծածկէ զբաճկոնակն ալ , լայն վարտիքն ալ . իրենց թշնամեաց յարձակմանցը դէմ կենալու համար գրեթէ միշտ հրացանով ու կացինով զինեալ են : Կանայք ալ մարդկանց պէս շապիկ մը ունին , բայց աւելի երկայն . աւելի նուրբ հիւսած , և գունաւոր մետաքսէ բանած է . վարտիքնին ներկած և քան զարանցը աւելի ամփոփ . գլխարկնին աչք առնող գունով մետաքսէ , ոսկեզօծ բանուած , և այնչափ պլտի որ հազիւ ճակատնին կը շօշափէ : Մարդկանցմէ աւելի՝ քող մը միայն ունին՝ որով օտարներէն երեսնին ծածկեն : Արեւմտակողմինները գլխարկնուն վրայէն թաշկինակ մը կ'անցընեն և մազերնին երկու երկայն հիւսակ ըրած ետևներնէն վար կը ձգեն :

Աֆղանուհեաց գլխի գլխաւոր զարդերէն մէկն է Վենետկոյ Տէքքիւսօ զրամը , գորոնք թելի վրայ անցուցած գըլուխներուն վրայ կը կապեն . սակայն ոսկիէ ու արծթէ շղթաներ ալ կապելը նուազ փառաւորութեան նշան չէ . այս շղթաներուն երկու կողմէն ալ ականջաց վրայ երկու խոշոր զնտակներ կ'իջնան . կ'ախորժին քթերնուն կռճիքէն ալ զանազան մեծութեամբ օղակներ կախել . զաղջիկները տարեց կանանցմէ որոշողը իրենց սպիտակ վարտիքը և արձակ մազերն են :

Քաղաքացի Աֆղանները քիչ և ամենաքիչ են . անոնք ալ կամ մեծամեծ անձինք են , կամ զինուորականք կամ մոլլայք , կամ քանի մը վաճառական և քանի մ'ալ գործաւորք . վասն զի վաճառականութիւնը , և մինչև արհեստները , Տաճկաց պահուած են :

Լոնտոնի բիշոփեայ պալատին հրկիզումը .

Հիանալի և չքնադագեղ Բիշոփեայ ըսուած պալատը , որ 1855ին Լոնտոնի աշխարհահանգիսին շէնքն էր և յետոյ փոխադրուեցաւ 'ի Սիտէնհէմ , Լոնտոնէն քանի մը մղոն հեռու բլրոյ մը վրայ աննկարագրելի տեսքով և զեղեցկութեամբ մը կը բարձրանայ : Քաղղիա յէն եկող ուղևորն դեռ չմտած Անգղիոյ տիեզերահռչակ մայրաքաղաքին մշտակախ ամպերուն մէջ և չթաթխուած անոր թանձր ծխովը , կառաց պատուհանէն գլուխը դուրս հանելով կ'ապշի ու կը զմայլի այն հրաշալի շինուածին վրայ որ անհամար հետաքնին և զիտութեան վերաբերեալ նիւթեր կը պարունակէ իր մէջը , և ուր Լոնտոնի քաղաքացին իր պարապոյ ժամերը կ'երթայ զբօսնելով և հրահանգուելով կ'անցունէ . այս ժողովրդեան պալատը , ինչպէս որ կ'անուանեն , քիչ մնաց որ հրդեհէն բոլորովին լափուէր :

Երբ ամեն կողմ պատրաստուած էր անթիւ հանդիսատեսներ ընդունելու , երբ անզուգական հրաշալիքն 'ի կարգի կը սպասէին իրենց այցելուաց , երբ ծննդեան ըսուած ծառը՝ զարդարեալ ամենայն տեսակ երփներանգ երիզներով՝ կը ճօճէր դեռ ևս բոլոր իր ակաղձուն և ծանրացեալ անգին նիւթերով ճիւղերը , երբ միով բանիւ ամենայն ինչ անպատմելի հասարակաց ցնծութիւն մը կ'աւետէր , և յաջող ու բարի շահավաճառութիւն մը ընկերութեանը , ահա անկարծելի հրդեհը կ'աւրէ ու կը փճացունէ մէկ շնչով ամենուն յոյսն և ակնկալութիւնը :

Մենք որ կոստանդնուպօլսոյ և ուրիշ փայտաշէն քաղաքաց կրակներուն սովորեալ ենք , կը զարմանանք 'ի սկզբան թէ որ կողմէն և ինչպէս արդեօք կրակը այս երկաթէ և ապակեայ շէնքին մէջ կը սկսի ներս մտնել . բայց տես որ դժբաղդաբար ոչ մէկ ժամ միայն՝ այլ